Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր   N 1

**ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ՎԻՏԱ ՄԵԴ» ՍՊԸ-ի ՄԻՋԵՎ 06.04.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/23-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «     » Ապրիլի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԻՏԱ ՄԵԴ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վարդան Մանուկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 06.04.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/23-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ծառայությունների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ծառայության մատուցումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից ծառայության մատուցման պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ ծավալի համար, ապա չմատուցված ծառայության մասով պայմանագիրը լուծվում է առանց համաձայնագիր կնքելու:

1.4. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով կից ներկայացված բժշկական զննություն անցկացնող աշխատակիցների ցուցակով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատուցման սույն համաձայնագրի և պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխան:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԾՁԲ-2026/23-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ<br>Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3բ<br>ՀՎՀՀ 05500411<br>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ<br>ՀՀ 1570078724667200<br>Տնօրեն՝ Սահակ Հակոբյան | «ՎԻՏԱ ՄԵԴ» ՍՊԸ ՀՀ. ք. Երևան,<br>Բեկնազարյան 3/6 շենք<br>«Ամերիաբանկ» ՓԲԸ<br>ՀՀ 1570072033990100<br>ՀՎՀՀ 01309392<br>Տնօրեն՝ Վարդան Մանուկյան |
| ------------------------------------------<br>(ստորագրություն) Կ.Տ | ----------------------------------------<br>(ստորագրություն) Կ.Տ. |

Ստորագրող
ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
3711840906

2026-04-13 16:02:59 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Digitally signed by MANUKYAN VARDAN 2714860400
Date: 2026.04.11 01:27:38 GMT+04:00